աւուրս բաղումք 'ի հրէից և յայլազգեաց՝ դիմեցին առ Դատաւորն. թէպէտ նա սատեաց նոցա, այլ 'ի լրման ժամանակի իւրոյ էառ 'ի Հայոց փոխանակագիր 17,200 դահեկանի՝ հատուցանել 'ի Կոստանդինուպոլիս. իբրեւ եկն նոր Դատաւորն, վերստին յարեան պարտատերք, և զի յօժար էր նա 'ի լսել զդատաստանս նոցա, և 'ի լուեցուցանել զնա և զԲաղաքապետն՝ դիմեցին պարտատերք 'ի դուռն վանաց որդւովք և ընտանեօքն, մանաւանդ հըրէայք, և մտեալ 'ի գաւիթ եկեղեցւոյն և 'ի սենեակս միաբանաց աղաղակէին և նախատանօք խնդրէին զառնելիս իւրեանց, և այս ոչ միանգամ և երկիցս, այլ բազում անգամ. մինչեւ անճարացեալ միաբանաց ելին արտաքս աղաչէին զնոսա, և 'ի ձեռն Խախամագլխի նոցին դարձուցին 'ի տեղիս իւրեանց, և 'ի յառնել այլոց պարտատերաց, և 'ի դիմել առ Դատաւորն՝ հազիւ կարացին շիջուցանել զՀրդեհ բարկութեան նոցին 'ի ձեռն Դատաւորին, և այլ այսպիսի խառն 'ի խուռն տագնապ և յուսաբեկ նեղութիւն, զորոց երկար գրեն։ Գրեցին եւ վասն հաշուոց և արդեանց Նուիրակաց՝ և այլոց իրաց։ Ոմանք յերեւելեաց ուխտաւորաց տարւոյն, որք եկեալ էին յայլ և յայլ քաղաքաց, տեսեալ զԱթոռն առանց գլխոյ և դահակալի, զթշուառութիւնս միաբանաց, զբռնութիւնս դըժնեայ պարտատերաց, միաբանեալ ցաւ 'ի սիրտ գրեցին գիր բաղմակնիք 'ի Կոստանդինուպոլիս առ գլխաւորս աղգին, և աղաչանօք թախանձէին զնոսա դարձուցանել առ վայր մի զաչս իւրեանց յԵրուսաղէմ, բառնալ զնախատինս ազգին, և այցելութեամբ դարմանել զվէրս նորա, զի մի առաւել զայրասցի անհոգութեամբ։

Լիւսդրացի Յակոբ եպիսկոպոս՝ որ նստէր 'ի Սիդոն փոխ հիւպատոս Անգղիոյ, 'ի սոյն ամի ա'ռ գիր 'ի Բգեշխից Դամասկոսի և Աքքէի, և առաքեաց Ոստիկանս յԵրուսաղէմ և խնդրէր 'ի Խորհրդականաց զտոկոսիս 50,000 դահեկանի առնելեաց իւրոց, և Ոստիկանն կամէր 'ի գլուխ տանել զայս գործ 'ի ձեռն Դատաւորին՝ այլ խմացեալ Հայոց 'ի բարեկամաց, ծանուցին նմա զաղքատութիւն վանաց, եւ որպէսզի զմիտս Ոստիկանին դարձուցին ունայն յետս. այլ յետոյ խմացան զի Յակոբ պատրաստէր զայլ